Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից, ՀՀ ԱԺ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման նպատակով, կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

24 հունվարի 2022թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Հարությունյան, Հ.Միսակյան, Ս.Սարգսյան, Է.Մնացականյան (Անժելա Լալայան*)
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան
(*Անժելա Լալայանը հրամանով փոխարինվել է Էլեն Մնացականյանով)

1. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 24.01.2022թ. ժամը 10:30-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ը սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

2 . Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

24.01.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Վարդուհի Հարությունյան

_____ Հայարփի Միսակյան

_____ Սարգիս Սարգսյան

_____ Էլեն Մնացականյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան